ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ՝ ՀՈՒՆԳԱՐԻԱ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Մարիանա Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

ք. Բուդապեշտ, Հունգարիա, 25-28 սեպտեմբեր, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի քարտուղարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի հերթական 93-րդ համդիպմանը

6. Քննարկված թեմաները

- Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի կոմիտեի 92-րդ հանդիպման մասին հաղորդումը,
- Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի գործունեության կանոնները և գործընթացների կազմակերպման նախագծի հաստատումը, Հատուկ հանձնախմբի հաղորդումը,
- Տիրանայում կայացած նախարարական համաժողովի արդյունքների վերաբերյալ Ալբանիայի քարտուղարության հաղորդումը,
- Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԿԲՏ) քարտուղարության մասին տեղեկությունը, 2024-2027 թթ. աշխատանքային ծրագիրը, ԵԲԿՏ աշխատանքային կառույցների հաստատումը, 2024-2027 թթ. ժամանակաշրջանի համար

աշխատանքային կառույցների համանախագահների առաջադրումը և թեկնածուների հաստատումը,

- Տիրանայի նախարարական կոմյունիկեով ստանձնած հանձնառությունների ներդրմանն ուղղությամբ անդամ-պետությունների կողմից ձեռնարկված միջոցառումները, կլոր-սեղան քննարկում,

- Եվրոպական կրթական աստիճան՝ տրանսազգային կրթության արդյունքում շնորհվող աստիճանի մասին տեղեկություն և վերջինիս ներդրման գործիքները և մարտահրավերները,

- Դոկտորանտների և երիտասարդ հետազոտողների եվրոպական խորհրդի (Eurodoc)՝ որպես ԵԲԿՏ խորհրդատվական մարմին ընդգրկվելու հարցը,

- ԵՀ կողմից ԲԳՀԽ աշխատանքային կառույցների գործունեությանն աջակցելու նպատակով ԵՄ Էրազմուս+ ծրագրի հատուկ մրցույթը, մասնակցության պայմանները և հայտերի ներկայացման ժամկետները:

7. *<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>*

Որպես Բոլոնիայի գործընթացի հետամուտ խմբի (ԲԳՀԽ) հայաստանյան ներկայացուցիչ՝ սեպտեմբերի 26-ին մասնակցել եմ ԲԳՀԽ 93-րդ համդիպմանը, որի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝ ԲԳՀԽ խորհրդի 92-րդ հանդիպման մասին զեկույցը, Հատուկ հանձնախմբի հաղորդումը ԲԳՀԽ գործունեության կանոնների և գործընթացների կազմակերպման նախագծի վերաբերյալ, Ալբանիայի քարտուղարության հաղորդումը Տիրանայում կայացած նախարարական համաժողովի արդյունքների մասին, ԵԲԿՏ քարտուղարության մասին տեղեկությունը, 2024-2027 թթ. աշխատանքային ծրագիրը, ԵԲԿՏ աշխատանքային նոր կառույցները, աշխատանքային կառույցների համանախագահների առաջադրումը և թեկնածուների հաստատումը, Եվրոպական կրթական աստիճանը և վերջինիս ներդրման գործիքները և մարտահրավերները, Eurodoc կառույցի՝ որպես ԵԲԿՏ խորհրդատվական մարմնի ընտրության հարցը, Հաջորդ շրջանի համանախագահների՝ Լեհաստան և Ալբանիա, հաղորդումը: ԵՀ ներկայացուցչի կողմից ներկայացվել են ԲԳՀԽ աշխատանքային կառույցների գործունեության

աջակցության համար ԵՄ Էրազմուս+ ծրագրի հատուկ մրցույթը, մասնակցության պայմանները և հայտերի ներկայացման ժամկետները:

Մասնակցել եմ Տիրանայի նախարարական կոմյունիկեով ստանձնած հանձնառությունների ներդրմանն ուղղությամբ անդամ-պետությունների կողմից իրականացված միջոցառումներին նվիրված կլոր-սեղան քննարկմանը: Նշել եմ, որ բարձրագույն կրթության և գիտության ոլորտում կատարվում են համակարգային բարեփոխումներ: Լրամշակվել և հանրային քննարկման է ներկայացվել բարձրագույն կրթության և գիտության մասին նոր օրենքը: Ընդգծել եմ օրենքի նախագծով ամրագրված այն դրույթները, որոնք կապահովեն Տիրանայի կոմյունիկեով ստանձնած հանձնառությունների ներդրմանը՝ բարձրագույն կրթության ոլորտի, միջազգայնացման և միկրոորակավորումների ներդրման համար հիմքերի ստեղծումը, որակի ապահովման մեխանիզմները, կրթության եռաստիճան համակարգի անցումը և այլն: Նշել եմ նաև ԵՄ Էրազմուս+ կարողությունների զարգացման գծով ընթացիկ ծրագրերը, որոնց իրականացման ավարտին ձեռքբերվելիք արդյունքները կնպաստեն միկրոորակավորումների, կրթության թվայնացման և դրանց որակի ապահովման, ինչպես նաև կրթական ծրագրերում կանաչ բովանդակության ուղղությամբ իրականացվելիք ծրագրերի ներդրմանը և փորձի փոխանակմանը:

Սեպտեմբերի 27-ին մասնակցել եմ նաև ԲԳՀԽ նոր աշխատանքային կառույցների գործունեությանը նվիրված գործնական քննարկմանը (ղեկավար՝ Բոլոնիայի համակարգող խմբի նախագահ Հելգա Փոսետ, Ավստրիայի կրթության, գիտության և հետազոտությունների նախարարություն), ներկայացրել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ներկայացված հայտը որակի ապահովման աշխատանքային կառույցի (TPG-C QA) համանախագահությունը ստանձնելու վերաբերյալ: Տվյալ խմբի համանախագահության հայտ ներկայացնող մյուս երկրներն են Ռումինիան և Ֆրանսիան: Նշել եմ, թե Որակի ապահովման ազգային կենտրոնը ինչպես կարող է նպաստել աշխատանքային կառույցի գործունեությանը և թե ինչ դրական ազդեցություն կարող է ունենալ վերջինիս՝ որպես համանախագահ ընդգրկվելը ՀՀ-ում կրթության որակի ապահովման ուղղությամբ մշակված

միջոցառումների իրագործման գործում: Նշել եմ նաև, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը պատրաստակամ է Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ համատեղ մասնակցել աշխատանքային կառույցի գործունեությանը՝ հանդես գալով որպես կառույցի գործունեության ապահովման համար մյուս համանախագահ երկրների հետ համատեղ մշակվելիք հատուկ Էրազմուս+ նախագծի գործընկեր:

Ծանոթացել եմ Պորտուգալիայի և Իռլանդիայի ԲԳՀԽ անդամների հետ, զրուցել ԵԲԿՏ հիմնական թիրախներին ուղղված միջոցառումների և դրանց ներդրման ընթացքին մասին: Խորվաթիայի ներկայացուցչի հետ փոխանակել եմ տեղեկություն բարձրագույն կրթության միջազգայնացման և որակի ապահովմանն ուղղված հիմնական միջոցառումների վերաբերյալ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատանքային կարգով շփումները շարունակելու վերաբերյալ:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ԲԳՀԽ 93-րդ հանդիպման արդյունքում հաստատվել են 2024-2027 թթ. աշխատանքային ծրագիրը, ԲԳՀԽ աշխատանքային կառույցների սխեման, հաստատվել են աշխատանքային կառույցները և համանախագահության հայտ ներկայացրած համապատասխան երկրների ցանկը:

Որոշում է կայացվել բավարարել Դոկտորանտների և երիտասարդ հետազոտողների եվրոպական խորհրդի (Eurodoc)՝ որպես ԲԳՀԽ խորհրդատվական կառույց հանդես գալու հայտը: Այն երկրներին, որոնք դեռևս չեն անդամակցում «Eurodoc»-ին, խրախուսվել է դիտարկել անդամակցության հարցը և օգտվել կառույցի ընձեռած հնարավորություններից:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է մինչև ս.թ. հոկտեմբերի 14-ը ԲԳՀԽ քարտուղարություն ներկայացնել 2024-2027 թթ. ԲԳՀԽ աշխատանքային կառույցներին մասնակցության հայտերը, ինչպես նաև ԲԳՀԽ խորհրդի հաստատմանը ներկայացնել ԲԳՀԽ 93-րդ նիստի արդյունքով ընդունված որոշումները:

Աշխատանքային կառույցների համանախագահության թեկնածու երկրներին առաջարկվել է սկսել հայտերի նախապատրաստման աշխատանքները՝ ԲԳՀԽ աշխատանքային կառույցներին աջակցության համար ԵՄ Էրազմուս+ ծրագրի շրջանակում հայտարարվելիք հատուկ մրցույթին պատշաճ մակարդակով և սահմանված ժամկետում մասնակցության համար:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Մարիանա Սարգսյան

02.10.2024թ.